


ՏԱՍՆ ԵՒ ՎԵՏՏԵՐՈՐԻ ՏԱՐԻ



Տարեկան 70 ֆրանկ, կես տարվանը 6 ֆրանկ:
Առանձին համարները 7 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են միմյանի խմբագրատան մէջ:

Մեր հասցեն. Тифлисъ. Редакция «Мшакъ».
կամ Tiflis. Rédaction «Mschak».

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերէն):

Յայտարարութիւնը ընդունուած է ամեն լեղուով:

Յայտարարութիւնները համար վճարուած են
խաւարանչիւր բառին 2 կոպեկ:

ՆԵՐԿԱՅ 1888 ԹԻԻՆ

ՄՇԱԿ

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

Հրատարակվում է Թիֆլիսում, նոյն դիրքով և նոյն պրոգրամայով: Մենք կը ստանանք սեփական
Հեռագրերը:

«ՄՇԱԿ» տարեկան դերը 10 ֆրանկ է, վեց ամսականը 6 ֆրանկ:
Գրվել «ՄՇԱԿ» կարելի է խմբագրատանը (Խմբագրատան և Խմբագրատան փողոցների ան-
կիւնում, Թամարիայի տանը):

Կայանութեան ուրիշ քաղաքները «ՄՇԱԿ» գրվելու համար պէտք է դիմել հետևեալ հաս-
ցեով. ТИФЛИСЪ, Редакция газеты «МШАКЪ», իսկ արտասահմանից. Tiflis, Rédaction du jour-
nal arménien «MSCHAK».

Խմբագիր-հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԳԱԿՈՒԹԻՒՆ

Թիֆլիսի առևտրական գործակալները.—
ՆԵՐԿԱՅ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Սուրմալուի գաւառի ցո-
րենի արդիւնաբերութիւնը. Ներքին լուրեր.—
ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Փաք-Ասիայի թիւերը.—
Ունեւորական պատգամաւորների հարցապնդում-
ները: Նամակ Լիբանանից. Արտաքին լուրեր.—
ԽԱՆՆ ԼՈՒՐԵՐ.—Հեռագրեր.—ԲՈՐՍԱ.—ՅԱՅ-
ՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Սալմէ Նո-
րատունիեան.

ԹԻՖԼԻՍԻ ԱՌԵՏՐԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱՏԱՐՆԵՐԸ

«Մշակ» անցեալ, 4-որդ համարում
տպւեցաւ մի գործակատարի նամակը, որի
մէջ նամակագիրը գտնատուում է Թիֆլիսի
գործակատարների անտարբերութեան մա-
սին դէպի որ և է բարեգործական նպա-
տակ, ինչպէս այս րօպէիս դէպի զէյթուն-
ցի հրկիզանքներն օգնելու գործը և այլն:
Բայց, եթէ լաւ դիտելու լինէր մեր քա-
ղաքի և նոյնպէս Անդրկովկասի մեր միւս
մեծ քաղաքների առևտրական գործակա-
տարների կեանքը, կը համոզվէք որ մեր
գործակատարների դասակարգը առհասա-
րակ անտարբեր է դէպի որ և է մտաւոր
կամ բարոյական շարժում:
Չը գիտնէք ինչպէս է եղել, որ մեր գոր-
ծակատարները չըջանում. կազմակերպվել է
աւանդութեան պէս այն համագումարը թէ
գործակատարը ոչնչով չը պէտք է հետա-
քըրվի, ամբողջ օրը պիտի իր տիրոջ խա-
նութեամբ մեծ մասամբ անգործ նստի, իսկ
խանութը փակվելուն պէս, պէտք է գնայ

քե ֆ անի, այլ և այլ այդինքնում կամ
անբարոյականութեան տեղերում: Եւ գոր-
ծակատարը տարուց տարի անց է կացնում
սիրտը, հոգին և մարմինը մաշող այդ տե-
սակ կեանքը:

Համարիտ է, մեր առևտրական գործա-
կատարները մեծ մասամբ ողորմելի ուռձիկ
են ստանում իրանց տէրերից, սակայն հա-
մեստ ապրելով նրանք դարձեալ կարող կը
լինեն կառավարվել այդ ուռձիկով:

Բայց ի՞նչ ուռձիկ էլ տաք, ոչինչ ուռձիկ
չի դիմանայ այն կեանքին, որ վարում են
մեր գործակատարները, այն շուտով, անհա-
շիւ ծախսերին, որ նրանք անում են: Ինչ
ուռձիկ կը դիմանայ, երբ որ գործակատա-
րը շատ անգամ մի կիրակեայ մէջ ծախ-
սում է քե ֆ ի վրա իր ամբողջ ամս-
վայ ուռձիկը:

Խանութում նստել, մէկի, միւսի վրա բաժ-
բասել, այնուհետեւ անսանձ կերպով քե ֆ
անել, ոչնչով չը հետաքրքրվել, ոչ հասա-
րակաց կեանքով, ոչ թաւորութիւնով, ոչ ըն-
թերցանութեամբ, փողերը ծախսել միմի-
այն դիմում և կանանց վրա—ահա մեր
գործակատարի ամբողջ կեանքը: Ի՞նչ կայ
զարմանալու որ գործակատարը չէ հետա-
քըրվում հեռաւոր զէյթունցիներով, երբ
նոյն գործակատարը չէ հետաքրքրվում իր
քե ֆ կապ զասարակաց կեանքով՝ դպրո-
ցով, բարեգործական ընկերութեամբ, լրա-
գրով, թատրոնով...

Բայց երբ Թիֆլիսի Առևտրական ասված
կոլեում՝ մասկարադ է լինում, որտեղ
իդակաս սեռի ամենապատուաւոր հիւրերը
լինում են՝ դիմակաւորված ազախներով,
լուսադար կանայք, կար անող կանայք—

պիտի ասի լուսաւոր... Հէց իմանաս նա է ինձ
կերակրում, նա է ինձ պահում, իմ կայ ու նըս-
տիս հողն է տանում: Հասարակական կարծիքը
ինձանից պահանջում է, որ ես ծիծաղեմ, երբ
լալում է սիրտս. հեղութիւն, խոնարհութիւն է
պահանջում, երբ իր սեփական ձեռով սրտիս
մէջը օձի բռն է չինել...

Այս և սրա նման մտքերը կայծակի պէս րօ-
պէական լոյս կը տային այն միտքիս մէջ,
ուր յարատեւ չըլտում էի:

Ահա մութը դարձեալ պատեց. մութը հարսա-
նեաց դահլիճում: Կանայք ինձ հետ համբուրվում
են. մէկը օրհնանք է կարգում, միւսը պարզ չը-
նորհաւորում է, երրորդը չը գիտեմ ինչ է փնթի-
փնթում քե ֆ տակ: Այլ և նրանց ասած խոսա-
ծը չեմ հասկանում. զգում եմ միայն, որ զուլտ-
բանի գնում՝ ծանրանում է: Ինձ չըջապատողները
ուրաւականի նման են թոււում ինձ: Ահա Պետր-
վասիլի՛ն է հետ դուրս եկող կեկեղեցի դը-
նալու. կասե՛ս քայ օգուտը դիմի ծանրութիւնը
փողը ինչ թիթեանում է: Բայց սակայն կեկեղե-
ցում աւելի ևս ծանրացաւ. ոչ մի բան չեմ հաս-
կանում տէրերի տիրացուների կարգած երգածից:
ձիգն եմ թափում ուշադրութիւնս լարելու, բայց
ոչինչ չէ դուրս գալի: Ուղեղիս մէջ կասես պատ-

այն ժամանակ կուրբի դահլիճները լի են
լինում մեր գործակատարներով:

Այդ տեսակ կեանք վարող մի ամբողջ
դասակարգի անդամներից, ի հարկէ, չէ
կարելի պահանջել որ նրանք հետաքրքր-
վեն հասարակական կեանքի մտաւոր կամ
բարոյական կողմով, հետաքրքրվեն որ և
է աշխատող վերացական գաղափարով,
հետաքրքրվեն սիրտը, հոգին և խելքը
կրթող ընթերցանութեամբ:

Գ. Ա.

ՆԵՐԿԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՍՈՒՐՄԱՆՈՒԹ ԳԱՒԱՐՆԻ ՑՈՐԵՆԻ ԱՐԳԻՆԱԲԵ-
ՐՈՒԹԻՒՆԸ

«Մշակ» № 29 և 32 մէջ կարդացիք երկու
տարբեր լրագրից: Երբեք մեր արտասահման
մասին. մէկը՝ պ. Արամիանեան պնդում է, թէ
1887 թվականին ցորենի առատութիւն է եղել,
իսկ միւսը՝ պ. Ս. Մ. այն կարծիքն է յայտնում
թէ ցորենի բերքը քիչ է և թէ 86 թվ. ցորենի
արտահանութիւնը մի պատահական բան կարելի
է համարել: Ի նկատի ունենալով այդ հարցի կա-
րեւորութիւնը, մենք մեր կողմից կաշխատենք մի
քանի ձիւղ տեղեկութիւններ հաղորդել Ս ու Ր-
մ ա լ ու ի դաւառի ցորենի արդիւնաբերու-
թեան մասին, և եթէ իւրաքանչիւր գաւառից
այդ հարցին վերաբերեալ ձիւղ տեղեկութիւններ
ուղարկվի խմբագրութեանը, այն ժամանակ շատ
հեշտութեամբ կարելի է եզրակացութիւն հանել
թէ՛ արդեօք այս տարի բերքը քիչ է եղել, թէ՛
ցորենը մի քանի անհատների մօտ է ժողոված և
այդ պատճառով միայն ցորենի գները բարձրա-
ցան:

Սուրմալու գտնվում է Արարատեան դաշտի
վրա, նրա երկարութիւնը 100 վերստից ավելի է,
իսկ լայնութիւնը միայն 35—40 վերստ է. այս
տարածութեան վրա բնակեցրած են մօտաւորա-
պէս 160—170 գիւղ:

Գիւղացիք պարապում են այդգործութեամբ և
երկարգործութեամբ: Թողնելով առ այժմ դաւա-
ռի մանրամասն նկարագրութիւնը ու բերքը,
վերցնենք միայն իդգիր իր օտ գտնված վեց
գիւղերով՝ Իդգիր-Մաւայ, Բահարու, Բլուր, Հախ-
վերիս, Ալիդամար և Խալֆալու, որոնք 1—5
վերստ հեռու են Իդգիրից: Այս վերոյիշեալ գիւ-
ղերում ամեն մի ընտանիք ունի վարելահող 5
սօմարից *) ոչ պակաս Նայելով ժամանակին, գիւ-

*) 10 սօմարը=1 խալվարի=30 պուդլի: Մէկ
խալվարի տեղը մօտաւորապէս հաւասար է 2 1/2
դեսետինի:

նէ են կանգնացրել, որի միջից չեմ կարողանում
թափանցել արտաքին աշխարհը: Տէրտէրը մի ինչ
որ հարցնում է կամ ինձանից, կամ Պետր վա-
սիլի՛նից. մի քանի անգամ այդպէս: Գլուխս
այնքան ծանր է, որ չեմ կարողանում պահել ու-
սերիս վրա...

—Վայ, ճղաւնում ես, լալում է Սարէթօն ձայ-
նը.—Սարթօնի քնթից արիւն է գալի: Առ էս աղ-
լուխը քե ֆ պահի. այս ինչ քամաղութիւն է,
լաւ, հողը գլխիս...

Պակի ծէսը վերջացել էր, բայց արիւնի հեղու-
մըն չէր դադարում. կանայք չըջապատել էին ինձ.
որը ջուր էր առաջարկում, որը թալիկնակ: Լըս-
վում էր նրանց մէջ և խորհրդածութիւններ այդ
դիպածի վերաբերութեամբ:

—Աստուած հեռի անի, էդ լաւ նշան չի, որ
հարսնացուի քե ֆ արիւն եկաւ. հեռի անես...

—Հա բալամ, միտք ա Հերիքնաղի հարսանի-
քին. նրա հետ էլ էսպէս էլաւ. հիմա ամիս չան-
ցաւ. դաշառները խեղճի մարդին սպանեցին, ողոր-
մելուն վրդ ծուռ՝ որբայրի թողեցին:

—Ի՛նչ նա ես ասում. բայց միտք ա, որ Մա-
րիամի պատկից սկի երեք չաբաթ էլ չանցաւ, որ
դռնի դուր գտնված սկսեց անհաղ. նա էլ էսպէս
էլաւ... Աստուած հեռի անի, լաւ նշան չի...

դաջին այդ հողը դրո՞ծ է ամուսնուց, բամբակ
կամ քնթից ցանելու համար: Անցեալ ապրիլ ամ-
սից Սուրմալուն սկսեց վնասների ենթարկվել. Ա-
րաքսը բարձրացաւ, որդեց իր ամբողջ, տիղմով
ծածկեց ցանած արտերը, կարկուտ եկաւ փչաց-
րեց շատ այգիներ և դաշտեր, այնպէս որ մենք
կարծում էինք թէ 81 թվ. սովը պէտք է կրկն-
վէր: Անցեալ պատահեց այն, ինչ որ պատահեց
առհասարակ այլ տեղերում—ցորենը թանկացաւ
—պուդլը 70 կօպէկից հասաւ մինչև 1 ր. 20 կօ-
պէկ: Մենք հետաքրքրվեցանք իմանալ, ինչ էր
այս թանկութեան պատճառը, մեր տեղեկու-
թիւններից այն եզրակացութեան եկանք, որ թէև
Արաքսը տիղմով ծածկեց իր ամբողջ, կարկուտ
փչացրեց Ալիդամարի, Իդգիրի, Բահարուի մի քա-
նի դաշտերը, Իդգիրի, Իդգիր-Մաւայի բոլոր այ-
գիներն ու շատ բամբակատեղերը, սակայն ցորե-
նի առատութիւն էր:

Ուրեմն ինչո՞ւ թանկացաւ, կը հարցնեն ամեն-
քե: Պատճառները հետեւեալներն են: Առաջին՝
Իդգիրը իր չըջակայ գիւղերով սերտ յարաբերու-
թեան մէջ է Նրեանի հետ. ինչ մաղանդայն որ
ունի ցորենը Նրեանում, նոյն դերը կամ 3—4
րօւրը պակաս լինում է գիւղերում: Իսկ Նրեա-
նում «չորաքնիներ» կատակ են անում ցորենի
հետ, թայլ հակողութեան չնորոգ. հետզհետէ
այնտեղ ցորենի գինը բարձրանում է. գիւղացիք
մտածում են, լաւ է դեռ ունեցածս պահել և մի
քանի րօւրով աւելի ծախեմ, և այսպէս «հանա-
քը դառնում է դաքանակ». առաջ միայն հաց-
թուխներն էին թանկացնում, այժմ գիւղացիք
ցորեն չը բերելով հրապարակ, առիթ է տալիս
ցորենի ընդհանուր թանկութեանը: Երկրորդ՝ ե-
րևանցի, վաղարշապատցի կամ նոյն իսկ Իդգիրի
ամբարառները չըլտում են գիւղից գիւղ, ժողո-
ւում են հարկի լալվարներով ցորեն, ամբարում
են և սկսում են թանկ գնով ծախել: Կան, ճըշ-
մարիտ է, ցորեն չունեցող ընտանիքներ, պարտ-
քը մինչև վրդ հասած գերդաստանի հայրեր,
բայց այդ ոչ թէ նրա համար, որ բերքը քիչ է
եղել, այլ նրա համար, որ հող քիչ ունեն. այդ-
պիսի ընտանիքները ամենաաւատ անքնիւրումն
անգամ աղքատ են և պարտապան:

Չը նայելով այս տարվայ կարկուտի և Արաքսի
վնասներին, վերոյիշեալ գիւղերը դարձեալ կարող
էին հետեւալ համեմատութեամբ ցորեն արտա-
հանել, որը այժմ մի քանի անհատների անկում
ամբարած է. Բլուր գիւղը կարող է արտահանել
900—1,000 խալվար, ուրեմն մօտ 30 հազար պուդլ:
Ալիդամար, Հալվարի՝ 800—900-ական խալվար.
Խալվարը 700—900 խալվար. Իդգիր, Բահարու
և այլն նոյնպիսի: Հետեւալ, եթէ բոլոր ցորե-

Ահա այս գուշակութիւններն էլ լսելուց յետոյ,
երեսիս խաչ արեցի ու դուրս եկանք եկեղեցուց
ես պակված էի...

Դժուար, շատ դժուար, կը լինէր ինձ այժմ
չարունակել այս դրութիւնը, եթէ իմ ամուսնա-
կան կեանքի հէց սկզբում դրած չը լինէի իմ
նկատողութիւնները և իմ կայ ու նստի մի քանի
երևոյթները: Աւօրեայ կեանքի մէջ կան այնքան
մանր մոնր հանգամանքներ, այնպիսի չնչին ի-
րողութիւններ, որոնց ընդհանուր գումարը վերջ
ի վերջից որոշ գոյն և որոշ ընթացք են տալի
մեր կենցաղավարութեանը, բայց և որոնցից ամեն
մէկը, առանձին վերցրած, գրեթէ նշանակութիւն
չունի և այս պատճառաւ շուտով մոռացվում է:
Ես բաւական եմ, որ իմ այդ օրագիրը պահպան-
վել է ինձ մօտ: Նա իմ այժմեան դրածներս
հետ կը լրացնի իմ կենսական ասպարիզի նկարա-
գիրը: Նորէն արտագրում եմ այդ օրագիրը. յետոյ
կանցնեմ արդի գրութեանս մօտագոյն օրերին:

1872 ամի սեպտեմբերի 15: Այսօր հաս
տան օրն է գնում, որ մեզ պատկեցին: Օրերն
այնքան երկարացել են որ չը գիտեմ թէ՛ պա-
րապ ժամերս ինչով լցուցանեմ: Աղջիկ ժամա-
նակս օրն է բռն դասերով էլ զբաղված, այժմ

նը դուրս գար հրապարակ, հէնց վերոյիշեալ 6 դիւր կարող է տալ 100—150 հազար պուգ ցորեն: Բայց այս բոլորն ամբարկած են 5—10 մարդու ձեռքում. սակայն անկասկած պիտի չատ ափսոսան այդ պարոնները յետոյ, երբ ցորենը իր այդ բարձր գնից կընկնէ:

Այժմ շատ տեղերում սկսել են պահապանել ցորեն ծախել. Նրեանում նոյն խառնուրդն է, ծան մէկ ամիս առաջ. դրա պատճառն այն էր որ նախ իւրաքանչիւր ընտանիք իր կարելիքը հողաց և երկրորդ՝ որ ուրիշ նախապահութիւն ցորեն ներմուծվեցաւ քաղաք: Մեր կարծիքով, պ. Արապետեանը իրաւացի է նկատել, որ ցորենի պահպանութիւնն չէ, այլ անհատներին ձեռքումն է ամփոփված և ցորենը այս գնին չի մնայ, այլ կընկնի խառն ինչ վերաբերում է պ. ի. Մ. ի այն կարծիքին, թէ ցորենի պահպանութեան պատճառով գիւղացին կը խրվի պարտքի մէջ, պէտք է ասել, որ գիւղացին պարտքի տակ է խրվել ոչ թէ այստարակայ ցորենի պահպանութեան պատճառով, այլ ընդ միշտ բաւարար հող չունենալու պատճառով: Այդտեղ չօգտվում է արդէն հողային խնդիրը, և այդ ուրիշ խնդիր է արդէն:

Այս տարվայ առատութեան և գալ տարվայ լիութեան վերաբերութեամբ մենք համակարծիք ենք պ. Արապետեանին հետ, մասնաւոր որ շատ գիւղեր այժմ բամբակի ու ընկիթի տեղ ցորեն են ցանել, որովհետեւ այս տարի նրանց բերանը, ինչպէս ասում են, «մեղրոտվել էր», ուրեմն անտարակոյս, գալ տարի ցորենի առատութիւն կը լինի, մասնաւոր որ կարելի կը լինի մեծ քանակութեամբ արտահանել և հետեւապէս ցորենի գինը այնչափ էլ չի ընկնի և գիւղացին պ. Արապետեանին գուշակած օգուտը կը ստանայ:

Բ.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԲԱՌՈՒՄԻ մեր թղթակիցը ուղարկել է մեզ հետեւեալ մանրամասն տեղեկութիւնները յունվարի 7-ին մի յունական նաւի այդտեղ պատահած հրդեհի մասին: Այդ առաքատաւոր նաւը բեռնված էր 15 հազար մեղրուկ կերութիւնով. ապրանքը պահպանում էր պ. Բէխնելին և ապահոված էր: Արակը սկսվել է ժամը 12-ին և նաւը շարունակում էր այլով մինչև որ բոլորովին խորանարկվեցաւ ծովը: Այսպիսի յայտնվելուն պէս անմիջապէս քաշեցին կարվոյ նաւը մի շոգենաւի միջոցով հեռու նաւահանգստից, որպէս զի վերտանգ չը սպառնայ միւս մօտիկ նաւերին:

ԲԱՌՈՒՄԻ մեզ գրում են և հետեւեալ յունվարի 8-ից: «Այսօր ժամը 3-ին ծովի կատաղի ալիքները դուրս նետեցին ցամաքի վրա մի ահագին նաւ յունական դրօշակով, ճիշդ թամարա կոչված ձին աւերակի դիմաց, որ Բաթու միջ 5 վրտոտ հեռու է դանիւմ: Նաւապետը իր 9 հօգի նաւաստիներով աշողութեամբ դուրս ելան նաւից ցամաքը, ծովափին դանիւղ քանի մի մարդկանց օգնութեամբ, իսկ նաւը առանց կո-

տանտիկնութեան պարտաւորութիւններով է սահմանափակվում իմ դործունեութիւնս: Եփել թափելով—այն էլ խոհարարի օգնութեամբ—ամբողջ օր զբաղվել անկարելի է, կտր ու կարկտանի էլ գործ չը կայ, տունը հաւաք տեղակ անելն էլ երկար բան չէ: Առատեանը Պետր վասիլի վիշ իր պաշտօնատեղին է գնում, ժամի երեքին գալիս է տուն և մենք ճաշում ենք: Յետոյ նա պատկում է ընկել, և ընտել է մինչև ժամի հինգը: Յետոյ թէյ ենք խմում: Առաջին շաբաթը գիշերները նա տանից չէր դուրս գալի, բայց ահա այս երկու օրը սկսել է բացակայ լինել, և երէկ ժամի տասնութիւնի վերադարձաւ: Այսպէս ամբողջ օր միայնակ և անգործ մնալով, սրտնեղութիւն է գալի վրաս: Մտածեցի օրագիր կազմել զոնեան Ասենք թէ իմ առօրեայ կեանքը շատ հասարակ կեանք է և զրկու տանքն էլ նիւթ չէ կարող տալ, բայց և այնպէս վերջին այս օրերում տեղի ունեցած մի քանի հանդամանքները ինձ երկար մտածմանքներով մէջ են գցել: Գուցէ, սրանց գրի առնելով, համ ժամանակը կանցի, համ այս հանգամանքների նշանակութեանցը խելք կարողանամ հասցնել: Գրելով, ուղում եմ ես ինքս ինձ հաշիւ տալ այն մտքերի նկատմամբ, որոնք անողորմաբար պաշարում են իմ ուղեղը: Եւ

արվելու դեռ մնում է ծովափի վրա, բայց հաւանական է որ գիշերս ալիքները կամ նորից ներս քաշեն ծովը, կամ բոլորովին փչեն նաւը: Այդ նաւը որ պէտք է մանէր նաւահանգստը, վարձված էր պ. Մանթաշեկի կերութիւնը բարձրու համար: Մովը այժմ սաստիկ կտառալի է:

Մեզ գրում են ԲԱՌՈՒՄԻ, որ գեղեցիկների 28-ին կայացաւ Բագուի փոխադրւած կրէդիտը: Ընկերութեան նոր շինութեան հանդիսաւոր օժու մէն և բացումն: Հանդիսին ներկայ էր ահագին բազմութիւն: Շինութիւնը փառահեղ է և դանիւմ է թաղաքի արեւելեան մասում, ծովափի վերջ: Շինութեան ճարտարապետութիւնը փոքր ինչ յիշեցնում է հայկական ոճը: Ներսիս էլ շինութիւնը շատ շքեղ է, գեղեցիկ մոտեցրելով և դահլիճներով:

Ստացանք պ. Ալեքսանդր Բաղդասարեանցից նրա երաժշտական հեղինակութիւնը պիտի համար «Արեւելեան երանակներ» (ВОСТОЧНЫЕ МОТИВЫ) վերնագրով: Այդ պիտեայի մէջ կան հայ, քրդաց, պարսից և արեւելեան այլ ազգային երանակներ, որոնցից մի քանիս բաւական սիրուն են և աշողութեամբ փոխադրված պիտի համար: Այդ նոտաները տպված են Մօսկվայում և տեսարկը արժէ 1 ռուբլի:

Ստացանք պ. Մուրիէի նոր հեղինակութիւնը Ֆրանսիայէն լեզուով: Այդ գիրքը կրում է «Contes et légendes du Caucase» (կովկասեան առակներ և աւանդութիւններ) վերնագրով: Գիրքը բաղկացած է 112 երեսից և բաժանված է երեք մասերի Contes Géorgiens (կապ առակներ) Contes Mingréliens (մինգրելեան առակներ) և Contes Arméniens (հայաց առակներ): Այդ առակները պ. Մուրիէ պատմում է մեզ թարգմանաբար, ազատ ոճով և չնորհալի կերպով: Ֆրանսիայէն լեզու իրանցողը ակամայ դրաւում է ընթերցանութեամբ, երբ գիրքը իր ձեռքին է ընկնում: Գրքովը տպված է ներկայ 1888 թվին Փարիզում, և վերին աստիճանի շքեղ կերպով է հրատարակված:

ԳՐԻՍԻՍԻ մեզ գրում են: «Զատ պատկերի դէպքերը օրից օր այստեղ շատանում են, այս քանի օրերս մի դօրիսցի կամենալով ամուսնացնել իր որդուն իր ամենամօտիկ աղջկաններից մէկի հետ, դիմում է Տաթևի վանքը, ներկայացնում է կեղծ ճիւղադրութիւն և կամենում է կաշառել այնտեղի յաջորդին. բայց յաջորդը մի քանի պատճառներով մերժում է կատարել դրա կամքը: Աւելորդ չի լինի աւելացնել և այն, որ այդ կեղծ ճիւղադրութիւնը կալմել է քահանաներից մէկը»:

Ռուսաց դրամատիկական խումբը շարունակում է իր ներկայացումները. բայց, տարաբաղաւոր, այդ ներկայացումները հասարակութիւնը շատ քիչ է յաճախում և թատրոնը համարեա միշտ

դարմանալին այն է, որ, ինչքան էլ ծանր թեթիւ չեմ անում, վերջ ի վերջոյ դուրս է գալի, որ խելքիս ասածը միանգամայն հակասում է նրան, ինչ որ թելադրում է բնագրուս, հոտառութիւնս:

Երէկ, ասացի, նա ուշ վերադարձաւ տուն: Մովը գիշեր էր. անձրեւ ծեծում էր մեր պատուհանները, միւրիկը ասուլաշանի ծխնելոյղի միջից իր սուրումով կասեալ բոթաբեր լուր էր ինձ ուղում հաղորդել: Մին միշտի տան մէջ և սարսափած բնութեան այդ դառնութիւնից, աչքս ճանապարհին սպասում էի մարդու գալուն: Միտո ջուր կտրվեց, մինչև որ նա տուն մտաւ:

—Որտեղ էիք այդքան ուշ, հարցրեցի նրան, վաղից չը դիտէի ինչ անել...

—Միթէ ամեն անգամ, պատասխանեց նա,— հաշիւ պիտի տամ թէ՛ ուր էի և ինչ էի անում:

Այս տեսակ պատասխանիս ես չէի սպասել ստանալ: Շատ կտա թուեցան ինձ նրա խօսքերը, սրտիս կտել էր նա, և ես լեզուս կծեցի ու լուռ ու մունջ հեռացայ ընկելու: Մտառանջից ինձ և այն հանգամանքը, որ նրանից զիտու հոտ էր գալի: Որտեղ էր եղել նա, զի բարեկամի մօտ...

Այսօր առաւօտ նա ինձ հետ առանձին քնքը շուքեամբ էր վարվում: Մի գուցէ հասկացել էր,

դատարկ է լինում. այդպէս էր և վերջին ներկայացման ժամանակ, երբ խաղում էին Սօլովիի «Разрыв» վերնագրով կօմէդիան, որը չը նայած մայրաքաղաքի բնակիչ վրա ունեցած փոքրիկ անշողութեանը, մի առանձին բան չէ ներկայացնում թէ բեմական և թէ գրականական կողմից: Պէտք է խոստովանել, որ դրամատիկական թատրոնը առաջվայ նման այլ ևս ցուրտ չէ, այլ բաւական լաւ տաքացնում է:

Թիֆլիսի դուստն, իր յունվարի 11-ի նիստում, ի միջի այլոց դատարկեցաւ ու պ ա ն դ ա ն ո յ յ հարցով, որը իսկապէս նոր հարց չէ Թիֆլիսի դուստնի համար: Կարդացվեցաւ վարչութեան գեկուցումը, որից երևում է, թէ սպանդանոցի համար յարմար համարված տեղը այժմեան սպանդանոցից հեռու է մօտ 200 սաթնոյով, և դանիւմ է կուրի ափին: Բացի բուն սպանդանոցից ենթադրութիւն կայ շինելու այնտեղ սպանդանոցի վարչութեան համար բնակարան: Ամբողջ ծախսը որոշված է մինչև 120 հազար Բայց հարցը նրանումն է, որ ներկայումս քաղաքը իր զանաձարանի մէջ փող չունի, և նոյն ժամ տարեկան ահագին դիֆիցիտ էլ ունի: Փաղաքի դրամական միջոցները այնքան սուղ են, և պարտքերն էլ այնքան շատացել է, որ ոչ թէ միայն դիտարկ է 120 հազար ռուբլի գտնել, այլ և շատ դժուարութիւնների են հանդիպում տարեկան գեկուցումը ծածկելու: Համար Սալայն վարչութիւնը համարում է սպանդանոցի շինութիւնը անյետաձգելի մի խնդիր, և ահա իր գեկուցման մէջ յունվարի 11-ին առաջարկեց այդ նպատակի համար պարտք վերցնել մի օր և է կրէդիտային հիմնարկութիւնից, դրա գնելով կամ քաղաքային սուղը և կամ քաղաքապետան հօդերը: Վարչութեան այդ առաջարկութիւնը բաւական առարկութիւնների և խօսակցութիւնների առիթ տուեց, երկար վիճաբանութիւններից յետոյ որոշվեցաւ սպանդանոցի հարցը հերթական հարցերի շարքից դուրս բերել, նախ և առաջ տալ վարչութեան գեկուցումը, որպէս զի ձայնաւորները միջոց ունենան հիմնաւորապէս ծանօթանալու հարցի մանրամասնութիւններին: Հետո, քանի որ անկարելի է դուստնի գեկուցման մի անդամ կարգաւոր՝ վճարել մի այդպիսի կարեւոր խնդիր:

Ստացանք յօդուտ Զէյթունի հրկիւղեալների 1) Պիտաղորոսից պ. Բաղդասար Խօճայանից 71 ռուբլի, որը նա պ. Վաղարշա Սիւնիկեանի և Գեորգ Մանթաշեկեանի հետ միասին հանդիմանակ է Պիտաղորոսի հայերի մէջ, և 2) Թիֆլիսի միջնակարգ դպրոցների հայ աշակերտներից 43 ռուբլի: Այդ գումարը խմբագրութեան մէջ եղած 51 ռուբլու հետ միասին կանի 163 ռուբլի:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՓՈՐԲ-ԱՍԻԱՅԻ ԹԻՒՐԵՐԸ

Ռուսաց Աշխարհագրական ընկերութեան վեր-

որ վերաւորված էր նրանից իմ սիրտը: Մինչև անդամ ձեռքս համբուրեց և առանձին զգուշանքով շնչեց թէ՛ արժանի չէ ինքը ինձպէս կին ունենալու: Չեմ հասկանում նրա այդ տեսակ տրամադրութիւնը, թէ՛ նա ինձ համար շատ սիրելի է ներկայանում այդպիսի բազմաբնույթ: Այս տառն օրվայ մէջ ես նրան երեք անգամ տեսել եմ այդ դրութեան մէջ: Այդ՝ այսպէս առանձին բազմաբնույթ վարչութիւններից արտաքուց, նա ինձ համար մի հանելուկ է իր սովորութիւններով, իր բնաւորութիւնով: Ամենաչին պատճառով յանկարծ մէկ էլ տեսար այնքան տաքացաւ, այնպիսի դուռն գուռն բարձրացրեց, որ կտեսն թէ՛ աշխարհը պիտի ընդգրկի, եթէ նա այլապէս վարուէր. մի ուրիշ անգամ մէկ էլ տեսար երեխայի բնաւորութիւն առաւ: Միանգամայն չը գիտես թէ՛ երբ սրան հաճոյ կը թւի, երբ անհաճոյ: Բաց յայդմանէ նրա պատկերը մերթնը մերթ այնպիսի տեսութիւն է արտայայտում, որ կատես թէ՛ մի անյաղ զնն մաշում է նրա սիրտը: Այդպիսի պահուն խօսել անգամ դժուարանում եմ: Մէկ անգամ ձգտեցի հարցնել նրա տեսութեան պատճառը. նա վրաս երկար նայեց՝ կատես թէ՛ չէր հասկանում իմ տուած հարցը: Եւ կրկնեցի իմ հարցը, նա սթափվեց ու

չին ժողովում, Պետերբուրգում, ինչպէս հաղորդում է «Нов. Время» լրագիրը, բոլորի ուշադրութիւնը գրաւեց բժշկապետ Ելիսէեվի գեկուցումը: Փոքր-Ասիայի թիւրքերի մասին: Այդ գեկուցման մէջ պ. Ելիսէեվ իր ճանապարհորդութեան ժամանակ արած նորագոյն տեղեկութիւններին հիման վրա, մանրամասն բացատրեց Փոքր-Ասիայում թուրքերի բնաշխն լինելու փաստը, և դրա պատճառները: Որպէս մասնաղէտ բժիշկ, պ. Ելիսէեվ ուշադրութեան է առել և ուսումնասիրել է շատ այնպիսի մանրամասնութիւններ, որոնց վրա ուշադրութիւն չեն դարձրել ուրիշ ճանապարհորդներ:

«Ազգագրական դիտողութիւններ անելու դժուարութիւնը Փոքր-Ասիայում,—ասեց, ի միջի այլոց պ. Ելիսէեվ—այսպէս երևում է այն բանից, որ համարեա իւրաքանչիւր ժողովուրդ այնտեղ առանձնացած և խիտ կերպով է բնակվում, հաւատարիմ մնալով ընտանեկան ցեղական սկզբունքին և յաճախ ներքին երկպառակութիւնների և կռիւների մէջ է անցկացնում իր ժամանակը: Բացի դրանից թիւրք ազգաբնակչութիւնը շատ անհաւատար կերպով է բնակեցրած, տեղեղ նա խիտ կերպով է բնակեցրած, իսկ տեղեղ ոչ մի իսկական տաճիկ չէ տեսնել: Այդպիսի պայմաններում, ի հարկէ, ազգագրական ճիշդ հետազոտութիւններ անել փոքր-Ասիայում անկարելի է, և պէտք է ուսումնասիրութեան գործը առաջ տանել, յարմարվելով տեղական դանապան պայմաններին: Միաւորային ճանապարհի վրա պ. Ելիսէեվ տեսել է զարմանալի գիւղեր, ուր մէկ ընդհանուր յարկի տակ ապրելու են եղել առանձին ընտանիքների ընդհանուր խմբեր: Փաղաքները Փոքր-Ասիայում յաճախ մեծ են և բազմամարդ, բայց աչքի ընկնող երևոյթներից մէկն էլ այն է, որ համեմատաբար հարուստ և բազմամարդ քաղաքներում ծառաների և հարկմաների բնակչութիւններ թիւը գերազանցում է ընտանիքների թիւին: Կանայք Փոքր-Ասիայում թուով խիտ շատ են աղամարդկանցից և տեղական հակառակն ապացույցանող տեղեկութիւնները ճիշդ չեն, որովհետեւ թիւրքերը չեն սիրում իրանց կանանց թուի մասին ճիշդ տեղեկութիւններ տալ և աւելի լաւ են համարում սուտ տալ և խաբել: Երեսմաների մասին նրանք, ընդհակառակն, միշտ ճիշդ տեղեկութիւններ են տալիս, որովհետեւ մանուկները նրանց պարծանքն են կազմում: Յաճախ եմ տեսել, որ այդպիսիք թուով միայն աւելի են սղաներից: Բացի ծնունդների սակաւութիւնից, թիւրքերի բնաշխն լինելուն շատ նպաստում են և ուրիշ հանգամանքներ, որինակ տեղական զինւորագրութեան սարսափելի պայմանները: Պ. Ելիսէեվ ինքն լիպ էր թէ ինչպէս զինւոր էին տանում տառն և ութ տարեկան տղաներին, որպէստեւ թուրք մեացածները վաղուց զինուոր էին վերցված: Զինուոր զրկածներից շատ քչերն են տուն վերադառնում, այդպէս, օրինակ, զեկուցանողը տեսել է, որ 300 մարդկանցից միայն 30 են վերադարձել: Սակայն իսազալ ժամանակ ևս բազմաթիւ պայմաններ վնասում են փոքր-ասիական թիւրքերի կեանքին, և զօկտօր Ելիսէեվ համարեա բոլորովին չէր հան-

բարկացաւ վրաս: Այն, ինչու նա իր սիրտը չէ բաց անում իմ առաջ, ինչու նա մասնակից չէ անում ինձ իր տխրութեանը: Միթէ նա մտածում է, որ ես նրան հակառակ չեմ կարող, չեմ կարող նրա ցաւերին սփոփանք հասցնել: Մինչդեռ, դուռն եմ, եթէ նա յայտնէր իր սրտին, եթէ մեկնէր իր այդ տխրութեան պատճառը, անկասկածելի է, որ արձագանք պիտի գտնէր իմ սրտի մէջ, ամենայն ջանք պիտի անէի օգտակար գտնելու նրան: Եւ հաւատադրեմ եմ, որ այդպիսի դէպքում մեր ընտանեկան կեանքը աւելի ջերմ և սիրալոյս լի զօյն կարող էր ստանալ. ընտանեկան սէրը պիտի սկսեր բուն գնելու մեր տանը: Մինչդեռ նա, մերթելով ինձ, մասնակից չանելով ինձ իր ներքին աշխարհի հետ, սառնացնում է մեր տան անկիւնները, ես տեղ չեմ գտնում հանգչելու համար...

Գարձեալ մի նկատողութիւն էլ ունեմ արած: Նրա բնաւորութեան մի յատկանիւն էլ այն է, որ ամեն մի անձնաւորութեան մէջ նա յոռի կողմերն է նկատում և այսպէս անբաւական մընում ամենից: Եւ չը տեսայ, որ նա մէկին՝ դուրս, մէկի վրա մի բարի խօսք ասէր. դուրս է գալի, որ ամենից նա վատ են, չար են:

(Նը շարունակի)

դիպում կատարելապէս առողջ մարդկանց 18-ից մինչև 30 տարեկան հասակի:

Փոքր-Ասիայում չափազանց շատ են այլանդակները—կոյրեր, համբիր, խիտաներ և խելագարներ: Որքան մոտենանք երկրի կենտրոնական և հարավային մասերին, այնքան կոյրերի թիւը մեծանում է, իսկ հիւսիսային ափերում փոքրամասն է: Եղիպտոսում և քարքարոտ Արաբիայում կոյրերի թիւը տեղ-տեղ 20 պրոցէնտի է հասնում:

Կործանիչ ազդեցութիւն ունեն հարեմները, յաճախ մեծ հարեմներում բոլորովին երեխաներ չեն լինում: Զեկուցանողը մանրամասն տեղեկութիւններ է հաւաքել մանուկների թուի մասին, և հետևանքն այն է եղել, որ իւրաքանչիւր ընտանիքի վրա մէկ երեխայ էլ չէ դալիս: Պատերազմները, երաշտութիւնը, ներքին երկպառակութիւնները, վատ մուշտը, կենսի լուրջ պայմանների պայմանների բացակայութիւնը ընդհանրապէս կործանիչ ազդեցութիւն են անում ազգաբնակչութեան վրա: Թէպէտ փոքր-Ասիայում ճիշդ տեղեկութիւններ չը կան մանկանացութեան մասին, բայց ազգաբնակչութեան առանձին խմբերի վրա արած դիտողութիւնները և հետազոտութիւնները անհերքելի կերպով ապացուցանում են թիւերի ընտելի լինելու փաստը: Մահկանացութիւնը մանուկների մէջ ևս նշանաւոր է: Այդպէս են հաստատուում թիւերը, իսկ ինչ որ վերաբերում է թիւեր-նօսմաններին, նրանք աւելի քաջատուջ են:

ՈՒՆԳԱՐԱՄԱՆ ՊԱՏՄԱՍԽԱՆՈՒՆԵՐԻ ՀԱՐՑԱՊԵՆԻՆԵՐԸ

Յունվարի 11-ին, ինչպէս արդէն հեռագիրը մեզ լուր բերեց, սահարական պարամէնտի մէջ՝ ունեցարացի երկու պատգամաւորներ՝ Գեղֆի և Պեղէլ՝ հարցապնդումներ արեցին՝ ուսում-աւարտողաբարական յարաբերութիւններ և Բալկանի վերաբերեալ մի քանի հարցերի մասին: Ունեցարացի պատգամաւորները պ. Գեղֆիի յայտնած մտքերը մեծ տպաւորութիւն թողեցին, և այդ պատճառով հարկաւոր են համարում ծանօթացնել նրա ճշտելի զխմբերի հետ: Մի քանի ժամանակ է արդէն, ասեց պատգամաւորը, որ լուրեր են պտտում Ռուսաստանի պատերազմական պատրաստութիւնների մասին, այդ պատրաստութիւնները մենք սպասում ենք կառավարութիւնից, բայց որ այդ պատերազմական պատրաստութիւնները տեսնուում են, դրան ապացոյց կարող է լինել այն, որ վերջին ժամանակներում Վիեննայի մէջ տեղի ունեցան մի քանի զինուորական խորհուրդներ, նոյն իսկ թագաւորի նախագահութեամբ: Ռուսաց կառավարութեան պատերազմական պատրաստութիւնների պատճառը Աւստրիան չէ, ինչպէս այդ կարծիքն են ունենում, դրանց պատճառը պէտք է որոնել այն հանգամանքների մէջ, որոնք առաջ են եկել Բալկանի վրա, և զլխաւորապէս Բոլղարիայում: Հէնց այդ պատճառով Ռուսարիան ստանաւորութեամբ վերաբերվեց դէպի պատերազմական լուրերը, մասնաւորապէս որ մենք խաղաղութիւն ենք ցանկանում և դէպի նրան ենք ձգտում: Կայսերական կառավարութեան քաղաքական պրոցրամման Բալկանեան գործերի վերաբերութեամբ միանգամայն համակրելի է և ցանկալի, չեղով այդ պրոգրամմայից կը նշանակէ հարուած տալ Բալկանեան պետութիւնների անկախութեանը, իսկ այդ բանը մեծ վնաս կարող է տալ նոյն իսկ Հաբսբուրգեան պետութեան կենսական շահերին: Եթէ մենք թող կը տանք, որ Ռուսաստանը տարածի Բոլղարիայում սլավոնականութեան դրօշակը, այն ժամանակ մենք պէտք է սպասենք, որ վաղ թէ ուշ, այդ դրօշակը կը տեղափոխվի նոյն իսկ մեր հայրենիքը:

Գրանից յետոյ խօսելով յատկապէս բոլղարական հարցի մասին, պատգամաւորը անցաւ աւստրո-գերմանական դաշնակցութեան խնդրին: Հիւրաբանչիւր ազգ, ասեց պատգամաւոր Գեղֆի, երկու տեսակ է դիմադրում իրան սպառնացող վտանգին. ամենից առաջ նա լաւ զինուորովում է, բայց որովհետեւ դէմքի վրա միշտ էլ կարելի չափողութեան յոյս դնել, ուստի հարկաւոր է լինում դիմել երկրորդ միջոցին,—այն է դաշնակցութեան: Վաղուց է, որ մեր պարլամենտում սկսեցինք խնդրելու են լինում, որ Աւստրո-Ունգա-

րիան դաշնակցի է Գերմանիային, և այդ դաշնակցութիւնը այժմ աւելի մեծացել է, դարձել է երեք պետութիւնների դաշնակցութիւն՝ այն օրով այդ բանը, մենք մի և նոյն ժամանակ չը դիտենք թէ ինչ գործնական օգուտներ ունի այդ դաշնակցութիւնը և որոնք են դրա սահմանները: Այսուհետեւ, որ Գերմանիայի դաշնակցութիւնը ապահովացնում է մեր պետութեան դրութիւնը, իբրեւ մի մեծ պետութեան: Բայց այդ քիչ է: Պատմութիւնից յայտնի է, որ Աւստրիան երբեմն տիրապետում էր Սլեւեդիային, Լոմբարդիային և Վենետիկիային: Այդ բոլորը Աւստրիան կորցրեց, բայց էլի մնաց մեծ պետութիւն է: Ոչ, այդ դաշնակցութիւնը հաստատ հիմք չէ մեր քաղաքականութեան համար: Ինչ կը լինի մեր դրութիւնը, եթէ Գերմանիան և իտալիան կը յայտնեն, որ քաղաքական հարցը, որը մեզ համար կենսական նշանակութիւն ունի, իրանց համար ոչինչ չարժէ: Ուրեմն ինչ նշանակութիւն ունի մեզ համար այդ դաշնակցութիւնը, և միթէ այդ դաշնակցութիւնը նրա համար է միայն, որ Գերմանիան իր ձեռքում պահի Ելզասը և Լոթարինգիան (հաւանութեան աղմկակից նշաններ պատգամաւորների կողմից): Գեղֆի վերջապէս իր ճառը յայտնելով, որ ցանկալի է իմանալ, թէ արդեօք Աւստրո-Ունգարիան ինչ աջակցութիւն է ապաստում Գերմանիայի կողմից, համարեա թէ նոյն մտքերը յայտնեց և Պեղէլ՝ իր հարցապնդումների մէջ:

ՆԱՄԱԿ ԼԻԲԱՆԱՆԻՅ

Բէյրութ, դեկտեմբերի 10

Լիբանան լեռները Միջերկրականի ծովեզերքէն սկսեալ կերկնեան մինչև ի Գամատկոս և ի Կասիոս լեռներն Անտիոքը:

Լիբանանու լեռանց չորս կարգ մտել չղթանք՝ մէկմէկէն ատրիանաբար դէպի վեր կը բարձրանան ընդարձակ տարածութեամբ: Օղջ բարեխառն է և առողջարար, ծովըրեայ դաւառներ ջերմութիւն են, ձիւն է ցուրտ աղաւթ, ամրան ամիրները ընաւ չի անձրեւ, իսկ որպէս որ ծովէն դէպի լեռները կը բարձրանայ դիրքը, այնպիսի օդը կը փոխվի, որով անձրեւ, ցուրտ և ձիւն տեղի կ'ունենան ի ժամանակին: Լիբանանու այս լեռանց ու բլրոց վերայ և ձորոց մէջ չիլով կան բազմաթիւ դիւղեր և վանքեր, ոմանք աղբիւրք և զետեղ ունին և ոմանք անձրեւի ջրեր կը դործանեն: Գիւղացոց տներ միայնակ են քարէ պատերով և հողէ տանիքով, իսկ վանատները երկարական են և կամարակալ տանիքներ հողով ծածկուած:

Ձանաղան ազգաբնակչութիւնը կան ի լեռներ և ի սահմանս Լիբանանու, որոց մեծամասնութիւն մարոնիտք են, աղքատ ատորի, իսկ դաւառութեանը կաթոլիկ: Հաննա Մարոն անունով մի եպիսկոպոսի քարոզութեամբ վեցերորդ դարում բաժանեցան ատորիներից և կոչեցան մարոնիտ, լեզունին արաբական է, իսկ եկեղեցական արաբողութիւնն ասորիական, ունին մի պատրիարք, 12 եպիսկոպոս, 2,000-ի չափ վանական քահանայք, 400 աշխարհիկ և ամուսնացեալ քահանայք, 150 վանատուներ, 2,000-ի չափ կրօնաւորք և 200 կուսանք, վանքերն են ընդհանրապէս յանուն սրբոյն Անտոնի անապատականին: Մարոնիտ կղեր տակաւին լաւ չէ լուսաւորուած և քաղաքակրթված, Ժողովրդեան վերայ մեծ ազդեցութիւն ունին թէ նիւթագէտ և թէ բարոյագէտ: Սլակաւթիւ դպրոցը ունին հին դրութեամբ:

Մարոնիտ Ժողովուրդը սուհասարակ հողագործ է չքաղար ու քաղաքակրթութիւնէն զուրկ, 200 դիւղեր ու աւաններ ունին Լիբանանու լեռանց մէջ, որոց հողերու մեծ մասը վանքերուն կը պատկանի, երկրին բերքն է մետաքս, գինի, ծխախոտ և ձիթենի:

Քեարովան ըստած դաւառը լեռնոտ, ժայռոտ ու քարոտ լինելուն պատճառաւ, մշակութիւն սակաւ է, որով ցորեն, գարի և այլ բերք շատ չի արտադրել, մշակեալ երկիրը շատ սուղ է, մի դեմասներ 100 ուսպիւնէն սկսեալ մինչև 500-ի կը ծախեն, իսկ Լիբանանու միւս գաւառներ բարեւրի և մշակեալ են, շատ անուանի է Պահալպէր կոչուած մշակեալ դաշտը՝ որ Լիբանաներ և աներ Լիբանանու լեռանց մէջ տեղն է, 3 ժամ լայնութիւն և 24 ժամ երկայնութիւն ունի:

200,000 մարոնիտ ազգաբնակչութիւն՝ առաջ իւր շրջակայ աղաղաւան ազգերից և չեքերից շատ կը հարստահարուէր, բայց 1862 թին Տիւրքի ազգաց հետ եղած կռուոյն պատճառաւ աղաւթեցան այն կրօնավոր ազգերի բռնութիւններից, այնուհետեւ Եւրոպիոյ հինգ մեծամեծ պետութեանց ստիպումով տաճիկ ուկրաինական պարտաւորեցաւ մի կաթոլիկ փաշա նշանակել, հինգ տարի ժամանակով, մարոնիտ ազգին և միւս լեռնաբնակ ազգաց կառավարիչ նահանգապետ, որուն փոքր ինչ տուրք կուտան և պահապան դօրք: Այս լեռնաբնակ ազգեր տաճիկ տէրութեան հարկ և դօրք չեն տար, այլ արածնացեալ իրաւունքներ կը վաճեն: Առաջին նահանգապետն եղաւ հայազգի Գաւութ փաշան և շատ մեծամեծ օգուտներ ու կարգադրութիւններ ըրաւ, Գաւութ փաշային յաջորդեցին օտար ազգի երեք փաշաներ, սակայն մարոնիտ ազգաբնակչութիւնը դժգոհ է և խորթ աջօք կը նայի այս նոյնապաշան, բայց օտար ազգի փաշաներին, կը վստայ իրան ազգին կարգի տալ մի նահանգապետ, սակայն օսմանեան տէրութիւն կընդիմանայ նրա ջանքին: Այս լեռնաբնակ ազգերի նահանգապետը ըրաւ իր Պէյթեփին աւանը, որ Պէյրութէն տաս ժամ հեռի է, փառաւոր է փաշային պալատը և դատարան:

Այս 25 ամեց նահանգապետութեան ենթակայ են նաև սոյն հետեւեալ ազգեր, 500,000 տիւրքեր, որը կառն մի կրօնք ունեն, 60,000 նուսայրեր, որը հեթանոս են, կը պաշտեն զարեղակն և հաւատան հոգեփոխութեան: 70,000 պէտէի և Ֆէլաւա արաբացիք, կրօնիւ մահմադական, այս չորս զխառն ազգերից զատ, կան նոյնպէս տաճիկք, թիւրքմէնք, ասորիք և եղաթք, որոց մեծ մասը երկրագործ են, և ոմանք վրանաբնակ թափառաչիլի և ելուզակ են, 120,000 կը հաշուեն այլ և այլ ազգեր: Ընդամեն ինչ միլիոն ազգաբնակչութիւն կայ այս նահանգապետ փաշային իշխանութեան ներքոյ:

Լիբանանու հարաւային կողմը Թարապուզուս քաղաքից ութ ժամ հեռի կան մայրքն Լիբանանու ըստած հինաւորեց ծառեր, վեց զրկաչափ հաստութեամբ, աւանդութեամբ կրսն թէ Սողոմոնի ժամանակէն մնացել են այս մայրքը:

Լիբանանու Գետրովան կամ Խոսրովաւան դաւաւին մէջ, ծովէն մէկ ժամ հեռի է Հարց Անտոնիանց միաբանութեան մէկ վանքը ի Պէյթիսաչայ, զայս միաբանութիւն հիմնադրել են 1707-ին բերացի վաճառական չորս եղբայր, որուն կղերանոցը 1834 թին Լիբանանին փոխադրեցաւ ի Հուլիս, մերձ ի Վատիկան, որպէս զի եւրոպական կրթութեանց, դիտութեանց և լուսաւորութեանց մասնակից լինելով՝ ստատար ըլլան իրանց ազգին յաւաքարիւնութեան և բարդաւաճման: 36 տարի անդ շարունակելէն յետոյ, 1870 թին Հասունեանի հակազգային ծանօթ խնդրոյն պատճառաւ, յորս Անտոնիանք ազգին քաջամարտիկը հանդիսացան, պարտաւորեցաւ Միաբանութիւն փոխադրել դարձեալ զիւր կղերանոց յՕրթաբեյ Կոստանդնուպոլսոյ:

Անտոնեան միաբանութիւն շարունակ հաւածանաց մէջ և ճնշման ներքոյ լինելով հանդերձ, մեծ ծաւալութիւն մատուցած է ազգին ու երեւելի անձինք նուիրած, այս առաքելական միաբանութիւն այժմ ունի մի հարուստ մատենադարան վերոյիշեալ Օրթաբեյոյ վանոց մէջ՝ 6,000 գրքերով և 300 այս ձեւագրերով:

Անտոնեանց վանքէն երեք ժամ հեռի է դէպի վեր Չամարու վանքը, հայ կաթոլիկաց նախկին կաթողիկոսարան, որ 1866-ին փոխադրեցաւ ի Կոստանդնուպոլսոյ, իսկ առ ժամանակ նոյն վանոց մէջ մի եպիսկոպոս, չորս վարդապետք և 30 աշակերտք քահանայական կոչմամբ: Հայ կաթոլիկաց այս երկու վանքեր մօտ երկու դարու զոյրութիւն ունին Լիբանանու լեռանց մէջ, բաւական երկիրներով և եկամտից աղբիւրներով օժտեալ:

Լիբանանու լեռանց մէջ կան նաև շատ մը վանքեր լատին կրօնաւորաց և Մեքլիտաց (ոյն կաթոլիկ):

Քեարովան գաւառի անտառի դիւղերից մին է ձիւնի ծովըրեայ դիւղը, որ ունի բանով նաւահանգիստ, ցորենի միլիարանոցներ, շերամի գործարաններ և բանջարանոցներ, ձիւնիէն մի ժամ հեռի կայ մի թղթի և մետաքսի գործարաններ, կէս ժամ հեռի է Չուլի անունով դիւղը, որուն մէջ կան մետաքսի և լուրիւ աղին կերպասեաց գործարաններ, տեարը նոյն տեղացի են Լիբանանու և Տաճկաստանի առաջին ծաղ-

կեալ և վաճառաւան քաղաքն է Պէյրութ, Միջերկրական ծովին եզերքը 100,000 բնակիչ ունի, որոց մեծ մասը մարոնիտք են, բաւական դպրոցներ և արհեստներ կան մէջ, պտղատու ծառերով ու այգիներով շրջապատեալ, շատ անուանի է հայ ազգի Մարեան Անտոն պէկի ընդարձակ քարվանսարան, 100 տունք հայք կան և ունեն մի եկեղեցի:

Պէյրութէն 12 ժամ հեռի է (Կառքով) Գամատկոս կամ Դամ քաղաքը, մի լեռնա ստորոտ ու բարեբեր դաշտի մէջ կառուցեալ, առատ ջուրերով և պտղատու ծառերով մի գեղեցիկ դրախտի կը նմանի, կրսն թէ այս քաղաք Քրիստոսէն 2,000 տարի առաջ շինուած է, ունի 150,000 ազգաբնակչութիւն, մահմադականաց մեծ ուխտատեղի է և մի նուիրական քաղաք: 100 ընտանիք հայք և շատ վաճառականներ կան Գամատկոսի մէջ:

Ս. Վ. Ե.

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—«Times» լրագիրը խօսելով այն լուրերի առիթով, որոնք հաղորդում են, որ իւր թէ Սուլթանը որոշել է վճարար վերաբերվել դէպի բոլղարական խնդրը, այն միայն է յայտնում, որ հաւատ չը պէտք է ընծայել այդ լուրերին:

—Սրանից մի քանի օր առաջ Վիեննայից հաղորդեցին, որ Ֆրանց Յովսէփ կայսրը հեռագրով պատասխանելով Կորսուրդեան պրինցի նոր տարվայ առիթով արտայայտած շնորհաւորութիւններին, նրան ուղղակի անուանել է Սակար-Կորսուրդեան պրինց, և ոչ թէ Բոլղարիայի իշխան: Այժմ կիսապաշտօնական լրագիրները դրում են այդ առիթով, որ այդ բոլոր լուրերը անհիմն են:

—Խաւակաւ կառավարութիւնը պատրաստութիւններ է տեսնում նոր զօրագունք ուղարկելու դէպի Ալբանիա:

—Պալմից դրում են, որ Բ. Գրան կարգադրութեամբ, այն հեռագիրները, որոնք վերաբերում են Ջէյդէի անցքերին, բռնուում և պահուում են:

—Պէշտից հեռագրով հաղորդում են եւրոպական լրագիրներին, որ Տիւսա չուտով պատասխանելու է Գեղֆիի հարցապնդումներին, որոնց մանրամասնութիւնները ընթերցողը կը գտնի «Մշակ» այսօրվայ համարում և պաշտպանելու է այն միտքը, որ Գերմանիայի դաշնակցութիւնը և հաստատ է, և օգտաւէտ:

—Դորեւրում մի պահպանողական ժողովի մէջ խօսեցած ճառում, Սալբերի այն միտքը յայտնեց, որ իւր թէ կառավարութեան ձեռք առած խիստ միջոցները խաղաղացել են իրանդական շարժումները: Թէ որքան ճիշդ է այդ կարծիքը, երեւում է նրանից, որ անգլիական հասարակական կարծիքը միանգամայն բացառում այդ խիստ միջոցների հետևանքը:

ԻՍՏԱՆ ԼՈՒՐԵՐ

Հին աշխարհը, որպէս յայտնի է, շատ բարձր էր դնահատում գեղեցիկ սեպի մարդկային արժանաւորութիւնը: Այնու ամենայնիւ արդէն այն ժամանակ ևս պակաս չէին տաղանդաւոր կանայք: Սաֆո պատկանում էր Յունաստանի ամենամեծ բանաստեղծների թւին, Միլետոս՝ Պինդարոսի ուսուցչուհին էր, իսկ Կորինտոս հինգ անգամ յաղթանակ տարաւ օլիմպիական խաղերում: Այդ և դրանց նման ուրիշ կանանց հանճարաւոր ընդունակութիւնը հնարաւորութիւն տուցեւ նրանց օրէնքով և սովորութեամբ հաստատված շրջանակից դուրս գալ: Սօկրատէսը և Պերիկլէսը ամօթ չէին համարում սովորել Ասպազիայի մօտ: Այն ժամանակ արդէն կային կին-բժիշկներ: Աթենացի Արիստոփանէսը բժիշկում էր հիւանդներին, իր կենսւրը վտանգել են ինքնաբերով, որովհետեւ այն ժամանակ Աթենքում մահուան պատժի երկիւղով արգելված էր կանանց ուսումնասիրել բժշկականութիւնը և վիրաբուժութիւնը, և ամուսանող գործադրել իրանց ուսումնասիրած մասնագիտութիւնները: Բազմաթիւ կանայք այն ժամանակ ևս ամուսնու էին բժշկիկ տղամարդ-բժիշկների մօտ: Այդ պատճառով մահկանացութիւնը կանանց մէջ, մասնաւորապէս ծննդկանների մէջ, շատ մեծ էր: Արիստոփանէսը, արհամարհելով իրան սպառնող վտանգները, արկաբար օգնում էր հիւանդ աթենացիներին: Նա տղամարդ չորեք հազար, այնպիսով էր իր հիւանդներին, բայց տեղական իշխանութիւնը, իմանալով այդ կնոջ արարածները, այն ժամանակների օրէնքների հիման վրա, մահուան պատժի դատապարտեց նրան: Սակայն այդ դատավճիռը անկատար մնաց, որովհետեւ աթենացի կանայք մեծական կերպով բողոքեցին դրա դէմ և յայտնեցին, որ կը մեռնեն Արիստոփանի հետ:

